ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2023 թվականի N 1375 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1988-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի «ՀԱՅ-ԱԼՄԱՍՏ» փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրելու մասին» N 1988-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ադամանդագործական և ոսկեգործական ընկերությունների կոնսոլիդացված պահանջարկն սպասարկելու, այն է՝ նույն ընկերությունների կողմից իրականացված կանխավճարների հաշվին բնական ալմաստի և թանկարժեք մետաղների հումք արդյունահանող ընկերություններից միասնական խմբաքանակով և (կամ) մեկ լոտով գնումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վերոհիշյալ ընկերություններին մեկ լոտով կամ խմբաքանակով փոխանցելու նպատակով

հիմնադրել «Հայ-Ալմաստ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ընկերություն)։».

2) որոշման ամբողջ տեքստում «ալմաստի» բառը փոխարինել «բնական ալմաստի և թանկարժեք մետաղների» բառերով.

3) որոշման 2-րդ կետում «(մեկ լոտով)» բառերը փոխարինել «խմբաքանակով և (կամ) մեկ լոտով» բառերով.

4) որոշման 3-րդ կետը «ադամանդագործական» բառից հետո լրացնել «և ոսկեգործական» բառերով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ